ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2075-Ա « 27 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի
Հ.1638-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 29-ի «Գնումների գործընթացի կազմակերպման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին» հ.1638-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան քաղաքում «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման ազդեցության գոտում ընդգրկված՝ հանրային գերակա շահ ճանաչված գույքերի (շարժական և անշարժ) շուկայական արժեքի գնահատման և հաշվետվության տրամադրման, հանքերի արժեքի գնահատման, տարածքում ընդգրկված՝ կարգավիճակը չճշտված, իրավունքի պետական գրանցում չստացած գույքերի չափագրման, գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Շողիկ Երանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի ծրագրի ղեկավար

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Կարեն Ղալթախչյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի իրավաբանական հարցերի մասնագիտական խմբի իրավաբան
Վանիկ Միրիբան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի հողի օտարման և վերաբնակեցման ավագ մասնագետ
Ասյա Օսիպովա	Համայնքային ծրագրերի իրականացման խմբի սոցիալական կառավարման և տարաբնակեցման ավագ մասնագետ

Լիլիթ Վարդանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի հողի օտարման և վերաբնակեցման մասնագետ
Մարինե Բադոյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի ծրագրի օգնական

»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ